



Գրիգոր Զոհրապ

Փոստա՛լ

Ա

Հաճի՛ Տյուրիկը, սպասուհիների միջնորդը, տասնհինգ օր աշխատելեն վերջ միայն հաշողեցավ ձեռք ձգել կեսարացի Ղազար Էֆենտիի կնոջ, Սուրբիկ հանըմին, Քատրգյուղի ամենեն հարուստ տիկիններեն մեկուն, ուզած սպասուհին:

Հաճին, պարտիզակցի մը, ինքն ալ սպասուհի, ստնտու, լվացարար, խոհարար կին եղած էր ատենով, պարագային համեմատ: Ծառայության ամեն աստիճաններն անցեր էր մեկիկ մեկիկ, Պոլստ հայ տուններուն, անոնց կարծեցյալ պարկեշտություններուն մեջեն հանելով իր հիմիկվան անկախ դիրքը:

Այդ տուններուն բոլորին մեջ, Հաճի Տյուրիկ, որ ան ատեն դեռ Երուսաղեմ գացած չլլալուն համար՝ հաճի չէր, իբրեւ ճշմարիտ ու կատարյալ աղախին, աղաներեն մինչեւ սպասավորները ճանչցեր էր մոտեն, եբոր մեծ ու պզտիկ, գրեթե առանց բացառության, քիչ շատ զինքը տղմեր տղմրտկեր էին, հոս հոն, սենյակներուն մեջ, հանըմները տունը չեղած միջոցին, սանդուխին գլուխը, դուռներուն ետին, երբեմն խոհանոցներուն անկյունները: Շատ մը տուններուն մեջ իր տիրուհիներուն նախանձը շարժելու չափ ընդունելություն գտած էր առանց գանգատելու:

Շատ բան տեսած էր իր անձին վրա եւ ավելի շատ իրեն շուրջը, իր բարակի հետաքրքիր քիթովը, հոտվտալով ամեն ապականությունները եւ սուր ականջով՝ դռներուն ետեւեն ունկնդրելով կամացուկ մը ըսված խոսքերուն:

Եփուն կնիկ մըն էր արդեն, եբոր առած պախշիշներեն եւ ամսականեն ավելցուցած ստակովը Երուսաղեմ գնաց, ով գիտե ուխտի՞ թե մեղքերուն

թողություն ուզելու համար: Վերադարձին՝ Հաճի Տյուրիկ, սպասավորությունը թողուց, ինք իր գլխուն գործի սկսավ, ծանոթ տուներու համար կին ծառաներ գտնելու ձեռք զարկավ, թելլալ կնիկ եղավ: Իսկույն հաջողեցավ այս գործին մեջ. պատրաստաբան ու զվարճախոս կին էր. էֆենտիներուն՝ վրան բաց կատակներ կ'ըներ. հանրմներուն օրվան գայթակղությունները կը բերեր: Ամենքը գոհ էին իրմն. ամեն բանի հարմար սպասուհի ինքը միայն ճարել գիտեր: Իր տեղավորած ծառաները տարիներով կկենային գտնված տեղերնին: Մեծ տուները, հարուստի տուները, իրեն կղիմեին. անոնք, որ իր հաճախորդներն էին՝ իր անունովը կը՝ պարծենային:

— Մեր թելլալը Հաճի Տյուրիկն է:

— Մերն ալ:

Հաճին Շփիկըլին կամ Պյուռկյուին բան մը կ'ըլլար հայ հանրմներուն համար:

Ասոր համար էր անշուշտ, որ Սուրբիկ հանրմ իրեն լուր դրկեց եբոր իր տանը մեջ, հին օրվան Մարիամին քով, նոր սպասուհի մը ավելցնելու որոշում տվավ ու անոր ճշտեց այն հատկությունները, որ նոր գալիք աղախինեն կալահանջվեին:

— Ըռնտիկ մեկը ըլլալու է ամեն բանն առաջ. հո՛գ չէ թե որ սկիզբը ձեռքեն գործ չգա. հոս շուտով խզմեթը կտվրի. տղուս՝ Օննիկին սենյակը պիտի շտկե, զգեստները մաքրե. սա ալ ըսեմ, որ աղջիկ զավակ չեմ ուզեր տանս մեջ:

Եվ վախճալով, որ գալիք սպասուհին Օննիկին սենյակը շտկելու, զգեստները մաքրելու սահմանելովը՝ պետք եղածեն ավելի բացահայտ կերպով իր դիտավորությունը հասկցուցած կ'ըլլա, իսկույն ավելացուց.

— Աչքը երեսը բաց մեկը չեմ ուզեր հա՛, հաճի՛. դուն իմ ուզածը հասկցար, թե որ զիս գոհ ընես, ուզած թելլալչեքդ եվելոքը կուտամ:

— Հասկցա, օղուլ:

Միջնորդը քչեն շատ հասկցող կին էր. անմիջապես չորս դին ինկավ, հարցուց, փնտրեց, բայց գտնվածները Սուրբիկ հանրմին ուզած պայմանները լիովին չէին

միացնել իրար վրա: Գեղեցիկ աղախիմներ չէին պակսել իր ձեռքին տակ, բայց ասոնց աչքերն ալ, երեսն ալ պետք եղածն ավելի բացված էին ու Սուրբիկ հանրմին ծեր էրիկը՝ Ղազար աղան գլխե հանելու չափ սատանա էին: Հանրմին ուզածը միամիտ աղջիկ մըն էր եւ ասիկա Պոլստ մեջ դյուրին չեղավ գտնել:

Այն ատեն Հաճի Տյուրիկ հատուկ ճամփորդություն ըրավ. Իզմիտ, Պաղչեճիկ, Արսլանալեկ, Ատաբազար: Վերջապես պըտտեցավ բոլոր այն գեղ տեղվանքը, որոնք սպասուհիներու արտածումը կ'ընեն. եւ ահա մեծ հոգնություններն վերջը, չորեքշաբթի օր մը ցորեկին, հաղթական մուտքով մը, Սուրբիկ հանրմին ներկայացուց իր գեղեն բերած սպասուհին, հագիվ տասնութը տարեկան կին մը, զոր նույն օրն իսկ միասին առեր բերեր էր Պաղչեճիկեն:

Սուրբիկ հանրմ գլխեն մինչեւ ոտքը զննեց նորեկը, որ դրան մոտ բարեւ բռնած կեցած էր. իր հագած պասման տոճեւ շրջագգեստին հակառակ՝ իրոք խիստ շնորհալի գտավ զայն, քանի որ շուտով ամսականին վրա հարմարեցավ միջնորդին հետ. յոթը մեճիտ ամիսը եւ տարին երկու ձեռք նոր լաթ, բացի իր մեկդի նետածներեն գորս իր հոժարության համեմատ պիտի նվիրեր, եթե զոհ մնար անոր խզմեթեն: Եվ անմիջապես սկսելու համար կոկիկ ու մաքուր շրջագգեստ մը հագցուց անոր, ճերմակ գոգնոց մը կապեց, գլխեն յագման հանեց եւ մագերը շտկել տվավ. այս համառոտ արդուզարդով աղախիմը իր գեղեցկության բոլոր շքեղությանը մեջ երեսաց: Մեջքը բարակ չէր, բայց հասակին բարձրությունը եւ բարձերուն հարստությունը վայելած էր: Ձվաճեւ, իր գեղացի ըլլալուն հակառակ դեռ ճերմկոտիկ դեմքին վրա սեւ խոշոր աչքերը սովորաբար թարթիչներուն շուրին մեջ կ'ապակեին ու երբեմն միայն ընթվիներուն աղեղին տակ կ'խրոխտային: Բերանը՝ իր զմայլելի գիծերովը ու երկու դիի անկյունեն իբրեւ թե հատկապես վեր առնված, անդիմադրելի պշրանք մըն էր ինքնին, եւ մոռցնել կուտար պոկունքին անարյունությունը:

Ոչ ոք կիներուն չափ գեղեցկության ճաշակը ու հասկացողությունը ունի. գեղեցկությունը այն միակ ճշմարտություն է, զոր կինը չի կրնար ուրանալ, նույնիսկ երբ իր թշնամիին վրա կ'գտնվի. շատ հեղ լսած եմ արամբի կնոջ մը վրա պատմված չարախոսություններու, բամբասանքին, իրավ կամ սուտ ամեն կերպ աղտեղությանց ամենեն տաք վայրկյանին՝ սա հայտարարությունը, որուն խորին

անկեղծությունը կգարմացնե գրեգ եւ պատմողին արդարասեր մեկը ըլլալուն համոզում գոյացնել կուտա:

- Ասոնք բոլորը իրավ են, բայց շուն կնիկը աղվոր է:

Սուրբիկ հանրմ հավնեցավ ուրեմն իր սպասուհիին. ապսպրեց, որ վրան գլուխը մաքուր պահե, աշխատությունը սահմանեց, վարքի բարքի խրատներ տվավ:

Հետո, իմանալով, որ հորմե, մորմե որք ու նոր ամուսնացած էր Տիգրանուհին, Սուրբիկ հանրմ, որ Հիվանդանոցի խնամակալուհի էր ու իր ամուսնին պես սրբասեր ու աստվածավախ կնոջ համբավը կվայելեր, իր սովորական մեծախոսություններն քիչ մը ջարդեց.

- Ես ծառաներս զավկիս պես կնայիմ. ուրիշ տուներու մեջ անոնց հորի ջուր կխմցնեն, դուն աղեկ գիտես, հաճի՛. ես աղբյուրի ջուր կու տամ անոնց. խոհանոցին մեջ երբոր կերակուրները չօգտեն ձեզի, ինծի անպատճառ իմաց տուր. խոհարարը ծառաները գրկելու կ'ելլա, ատանկ բան չեմ սիրեր ես. սա ալ ըսեմ, որ կերակուրդ ուտելուդ պես խոհանոցին մեջ կենալու չես. էրիկմարդ ծառաներուն հետ պետք չէ որ խոսքի բռնվիս. հասկցա՞ր, աղջիկս. հիմա գնա՛, թող Մաիրամը գործդ ցուցնե քեզի:

Մեղր ու կաթ կվագեր բերնեն. Տիգրանուհին կատարյալ երանքյան մեջ զգաց ինքզինքը:

Բ

Հետեւյալ առտուն կանուխ Տիգրանուհին արթնցավ: Պատուհանն եկող արերը ճիշտ իր անկողնին վրա կ'իյնար. կսփովեր, իր հոլանի պարանոցին ու թելերուն սպիտակության վրա կճառագայթեր, բոլոր սենյակին մեջ ուրախություն մը կբերեր: Երկու օրե ի վեր իր կյանքին մեջ պատահած փոփոխություններուն տակ ընդարմացած կմնար. անկողնին մեջ նստած, մտքովը ատոնց քաղվածքը կ'ըններ:

Գեղը, մորաքրոջ մը տանը մեջ ապրած էր ինքզինքը գիտնալե ի վեր մինչեւ ամուսնացած օրը: Մորը հիշատակը իր պզտիկ տարիքին մեջ շատ տարտամ կերպով մը կուգար մտքին առջեւ, ատեն անցնելով գույնը նետած, գիծերը

եղծված հին լուսանկարի մը պես: Հայրը բնավ ճանչցած չէր: Այս մորաքրոջ տանը մեջ՝ կես մը աղախնի ու կես մը ազգականի պես կ'ապրեր, ինչպես կ'ըսեր ինքը. իր ապրուստին բեռը զգալի չդարձնելու նպատակով: Ու երջանիկ պիտի ըլլար հող ապրելուն եթէ մորաքրոջը երկու աղջիկները անտանելի չդարձնէին իր կյանքը: Ի՞նչ էր հանցանքը՝ եթէ անոնցմէ աղվոր էր ինքը: Ապաքեն, այս աղվորությունը իր թշնամին եղած էր եւ անկեղծությամբ Տիգրանուհին կզոյար իր գեղեցկության համար:

Գեղին մեջ շատ մը տղաք իր ետեւէն ինկած էին գիշեր ցորեկ, հասակին շքեղությանը, մինչեւ կոնակը հասնող խարտյաշ մագերուն գովեստը փափաւով ականջն ի վար: Ասոնց եւ ոչ մեկուն հավտացած էր, բայց այս հետապնդումները՝ հանդարտ ջութի մը մեջ նետված մանր քարերու պես, իր հանգիստը վրդովեր էին: Մորաքրոջը աղջիկները իր վրա ամեն տեսակ չարախոսություններ տարածելու մեջ առաջիններն էին: Ահա այդ միջոցին էր, որ երիտասարդ բանվոր մը, իր օրական ապրուստը ճարելու հագիվհագ կարող մեկը, զինքը ամուսնության ուզելու ելել էր: Տիգրանուհին տասնութը տարու էր հիմա, ինչ որ գեղ տեղերու մեր աղջիկներուն համար շատ առաջ գացած տարիք մըն է. հետո, իր մորաքրոջ տունէն ելլելու ստուգությունը կար, մորաքույրն ալ զինքը ճամփելու փափագին մեջ, սիրով ընդուներ էր այս առաջարկությունը: Եվ օրին մեկը հարս գացած էր տան մը մեջ, ուր իեծէն գատ անոր ծնողքը կային: Մեծ բան մը չհասկցաւ այդ ամուսնութենէն. կարգվելէն ութ օր վերջը օր մը միայն դարձաւ կնոջը քով, հետեւյալ օրը նորէն իր լեռը երթալու, աներեւութանալու համար: Հարսը հոս ալ կ'աշխատեր օրն ի բուն ու իր կյանքը, բեւեռային օրերուն պես, երկարատեւ խավարի մը կնմաներ գոր ոչ մեկ լույսի ճառագայթ կուգա վայրկյան մը գեթ լուսավորել, ուրախացնել:

Հանկարծ օրին մեկ ալ իր էրիկը տուն բերին ոտքը կոտրած, ամիսներով անգործության դատապարտված. ասիկա լրումը եղավ: Ա՛հ, թէ որ գոնէ գավակ մը բերած ըլլար, հիմա ստնտվության կ'երթար Պոլիս, ստակ կվաստակեր ու տուն մը կրնար դնել, բայց այդ ալ չկար ու ասիկա՝ իր կեսուրը ու կեսրայրը հանցանքի մը պես կզարնէին իր երեսին:

Հաճի Տյուրիկ ճիշտ այդ ժամուն հասավ զինքը միասին Պոլիս տանելու համար: Էրիկն ալ, մորաքույրն ալ, որ մոր տեղ կանգնէր, հոժարէր Էին ասոր.

Տիգրանուհին ազատագրության պես բան մը կտեսներ հող: Թելլալը՝ անոր ապագա հանրմին փառաբանությունը բերնէն չէր ձգէր: Հարուստ մարդիկ, վերկիլի հանրմ, կաղանդին, ծնունդին, գատկին պախշիշ, կերուխումը առատ, աշխատությունը թեթեւ. սպասուհիի մը, համար ասկէ ցանկալի տեղ չէր կրնար ըլլալ:

- Աղջի՛, օդո՛ւլ, չգտնված տուն է,- կ'ըսէր Հաճի Տյուրիկ:

Ա՛յնքան որ մորաքույրը պահ մը կմտածէր իր աղջիկներէն մէկը դրկել Տիգրանուհիին տեղը: Վերջապես որոշումը տվեր էին, եւ հետեւյալ առտուն, դեռ չլուսացած, գիշերվան մութին մեջ կառքը երկու կիները Պաղչենճիկէն իջեցուցեր, ծովեզերքը բերէր ձգէր Էր, ճիշտ երբ արշալույսը կծագէր:

Տիգրանուհին հիմա այս մութէն դեպի լույս ուղեորությունը, ժամանումը միտքը կբերէր, բարի գուշակ մը կհամարէր իր կյանքին համար: Իսկույն գմայլեր Էր Իգմիրի ծովածոցին վրա, որ այգուն սրսկած դեղին ոսկիի ցոլացումին մեջ, անշարժ կտարածվեր, կանուխ արթննալ չուզող ու ծույլ կնկան մը պես: Մինչեւ այդ տարիքը մոտանց չէր տեսներ ծովը ու այս պահուս, գեղին եռաթի խոշոր նավակի մեջ տեղավորված, իր պզտիկ պողչան քովիկը, այդ կապույտ տարածության վրա սահելուն կ'գբոսներ ու անոր վրա պատմված ահավոր պատմություններուն չէր հավտար: Իգմիր հասնելուն՝ հագիվ ատեն ունեցեր էին շոգեկառքը մտնել եւ իսկույն կայարանին աղմուկէն ու թոհուրոհէն գատվելով խոլ արշավ մը սկսէր Էր. անդուլ, անդադար, ժամերով վազք մը, քերելով ծովեզերքը ձախէն, ու աջէն՝ սուրալով մութ մանիշակագույն հողերու մեջէն, որ մինչեւ Հերեքն այդ տեղի ցամաքը կկազմէ: Հոս հոն, տեղ տեղ կկենային ու Տիգրանուհին կկարծէր, որ հոգնություն առնելու համար Էր ասիկա. ոմանք կձգէին շոգեկառքը, ոմանք նոր կմտնէին, եւ անմիջապես ճամփա կ'իյնային. հիմարական խոյացումը կսկսէր դեպի Պոլիս: Ու կհիշէր վերջապես հասնելին Փայտար Փաշա, Պոլիսը, Փերան գորս Հաճի Տյուրիկը մատով իրեն ցուցուց հեովն եւ ասդին՝ Քատրգյուղ, իրենց գալիք տեղը, մաքուր փողոցներով, գեղեցիկ տուներով շինված քաղաքը, որուն վրա հիացավ: Կայարանին մեջ

կվախնար, որ բազմության մեջ չկորսվի. թեի՜ն տակ պզտիկ պողչան ուժով մը կսեղմեր, իր շփոթությանը մեջ մոռնալու վախով: Հաճի Տյուրիկը քովն էր սակայն, ճարպիկ ու վարպետ առաջնորդ, որ ամեն դժվարությանց մեջ կ'քաշեր, կհաներ գինքը, մինչեւ որ հո՛ւ, այս հարուստ տանը մեջ բերավ ու հանձնեց գինքը: Հաճի Տյուրիկ պահապան ու գորավոր հրեշտակի մը մարմնացումն էր իր աչքին, որ Տիգրանուհին սրտին խորեն շնորհակալ կ'ըլլար անոր այս վայրկյանիս:

Եւ այս տունը՝ իր հարուստի բարբառող կահավորումին մեջ. երեք ծառա, որոնք իրենց աշխատության մեքենական ճշտությամբը զարմացուցեր էին գինքը. ծեր Մարիամը, որ ինչ ընելիքը պիտի սորվեցներ հոս տեղ. եւ մանավանդ անուշ լեզու հանըմ մը: Միայն իրիկունը աղային լուրջ ու խոժոռ դեմքեն վախցավ քիչ մը. հետո անոր տղան, երիտասարդ մը, մարմնեղ, արյունոտ անձ մը. հորը ձեւը, հորը լրջությունը:

Այս ամենը կարգով ամփոփեց շարեց մտքին մեջը ու խորունկ գոհունակություն մը զգաց. հետո ցատկեց տեղեն շուտով, հագվեցավ, մագերը սատրեց, պատեն կախված հայելիի մեծկակ կտորի մը մեջ նայեցավ. այն ատեն, առջի անգամ ըլլալով ուշադրությամբ դիտեց իր դեմքը, աղվոր ըլլալուն հաճույքը զգաց ու վար իջավ:

Գ

Սուրբիկ հանըմին աղվոր պեպեմեն ամենուն բերանն էր գեղին մեջ: Աղաներն ալ, հանըմներն ալ Սուրբիկ հանըմը կշնորհավորեին:

Պզտիկ ու անգիտակից պչրանքով կհագնվեր անիկա, իր հանըմին պատվերին համեմատ, ճերմակ մաքուր գոգնոց կապած առջին: Իրիկունները աշխատանքին լմննալուն ետքը, ամենեն վերի հարկը իր փոքրիկ սենյակը կ'երթար, պատուհանին առջեւ կնստեր, շոգենավեն ելլողները դիտելու համար, մինչեւ որ վարեն կանչեին գինքը:

Տանը մեջ կ'սկսեր վարժվիլ. իր առած ամսականը ամբողջությամբը գեղ կորկեր, էրկանը ձեռքը, ու գոհ էր այս կյանքեն: Միայն երբեմն խուլ անհանգստությունը ուներ վտանգի մը գոր չէր տեսներ, ճիշտ ինչպես սենյակի մը մեջ ինքնիրենը

մատած մեկը, նույնիսկ աչքը գոց պահուն, կ'զգա ուրիշի մը ներկայությունը, աչքը դեռ չբացած:

Այս վտանգը ավելի քան օդի մեջն էր, քան թե շոշափելի բան մը: Չէր գիտեր հաստատ կերպով, թե ի՞նչ էր իրեն սպառնացող բանը, բայց զգույշ կենալու պետքը կ'զգար:

Այս Պոլսո մարդիկը, իրենց բոլոր քաղաքավար վարմունքին հակառակ, կնկան նայելու ձևեր մը ունեին, որ համբուրվելու պես կոփաչներ իր երեսին եւ իր նոր հարսի, գրեթե կույսի ամաչկոտությունը կվիրավորեր ամեն վայրկյան: Միմիայն իր կնոջական բնագոյովը կ'զգար լուռ իդձերու հովը, որ իր շուրջը կ'ելլեր, կբարձրանար, երբոր էրիկմարդոց առջեւ գտվեր, անուշ բերած կամ ջուր տված միջոցին: Եվ դեպի դուռ դարձած՝ սենյակեն դուրս ելլելուն, ամեն աչքերը իր վրա էին, իր հաղթ ու գեղեցկաշեն մարմնին վրա, որուն լեցուն գիծերը, իր քավածքին համեմատ հագիվ թե նշմարելի շարժումով մը կխաղային: Մինչեւ անգամ իր հագուստը ու կապուստը, շինականի եւ սպասուհիի պարզությամբ, եւ թերեւս ասորի համար հրապուրիչ բան մը ունեւ:

Այս ձգողության՝ Ղազար աղային տղան չդիմացավ երկար ատեն:

Մարմնեղ ու տարփասեր երիտասարդ մըն էր, հորը պես իր բոլոր իդձերը թաքուն պահելու սորված ու ասորի համար, ա՛լ ավելի ինքնզինքը զսպելու ամկարող, երբոր դիպվածով մինակ մնար սպասուհիին հետ:

Իր ծանր գլուխ տղու համբավին հակառակ, շուտով սկսավ կատակներ ընել Տիգրանուհիին հետ, փորձի ենթարկելով գայն, իբեւ թե անզգուշությամբ, անոր մարմնին կդպեր, ձեռքը բռնել կ'ուզեր: Այն ատեն, Տիգրանուհին հասկցավ անոր միտքը եւ ետ քաշվեցավ, առանց խուճապի, այն վախկոտներուն պես, որոնք ծանր-ծանր քալելով կնահանջեն, շինծու քաջությամբ եւ անփութությամբ մը ծածկելով իրենց նետդիի դողը, դիմացինին հարձակումը չփութացնելու նպատակով:

Անկե վերջը երիտասարդը բացեիբաց իր պահանջումները պարզեց անոր, այնքան ավելի բռնանալով, որքան վեց ամսե ի վեր տետող մերժումները զինքը

ամեն ծայրահեղությանց տանելու սատիճանին հասցուցեր էին: Առտու, իրիկուն, գիշեր, աչքկապուկի կամ պահվրտութի պես բան մըն էր տանը մեջ. սենյակե սենյակ, անկյունե անկյուն հալածանք մը, որուն մեջ աղախինը, պարտավորված անոր մոտ գալու ամեն անգամ, որ խրզմեթ մը ապսպրեր իրեն, ինչ ընելիքը չէր գիտեր:

Վերջապես, հուսահատած, օրին մեկը հանըմին գնաց ամեն բան խոստովանելու: Սուրբ ու առաքինի կին էր իր հանըմը, որուն գովեստը կ'ըներ քարոզիչ սրբազանը շատ անգամ եկեղեցվո բեմեն: Ու իրեն պաշտպան մը գտնելու առաջադրությամբ, ցորեկ մը իր հանըմին հետ մինակ մնացած մեկ ատենին, վարանելով, կարմրելով ամեն բան հասկցուց անոր:

Սուրբիկ հանըմ զարմացավ, չհավտաց նախ ասանկ բանի մը գոյությանը, թերեւս Տիգրանուհին սխալած էր: Հետո ըսավ, որ իրիկունը իր տղուն հետ պիտի խոսեր, բայց ավելցուց ժպտելով, որ այս բոլոր պատահածին հանցանքը Տիգրանուհին գեղեցկությանն էր:

- Աղեկ սիրտ ունի տղաս, բայց էրիկմարդ է, դուն ալ այնքան աղվոր ես, որ չեմ զարմանար զքեզ սիրելուն: Մարդ քեզի չի կրնալ դիմանալ:

Հաճի Տյուրիկ, որուն Տիգրանուհին հայտնած էր իր վիճակը, խնդաց իր վրան:

- Օդո՛ւ,- ըսավ անոր,- էֆենտիիդ տղան կսիրե կոր քեզի, ա՛լ ի՞նչ կ'ուզես:

Տիգրանուհին քիչ մը ատեն ալ պաշտպանեց ինքնզինքը անոր ձեռնարկություններուն դեմ, բայց կամաց-կամաց վարժվեցավ սիրո խոսքեր լսելու անկե: Հանըմը այդ միջոցին շատ-շատ պարգեւ կուտար իրեն. ամսականին մոտ գումար մըն ալ ասանկով կ'առներ: Տգրանուհին կ'խոստովաներ ինքնիրենը, որ ասիկա միմիայն իր աշխատությանը համար չէր: Հետո բոլոր այս հետապնդումներուն հալածանքներուն մեջ իր արյունն ալ կ'եռար, դող կ'ելլեր ու կսկսեր ինք ալ փոխադարձ հաճույք մը զգալ այդ ամենեն: Փախչիլ կձեւացներ, բայց կձեւացներ միայն ու կժպտեր:

Գիշեր մը Տիգրանուհին իր սենյակի մեջ գտավ իր երիտասարդ Էֆենտին, պռոպ ուզեց, բայց վախցավ ձայն հանելու, աղաչեց.

- Ոտքդ պաքնեմ, Էֆենտիս, մեղք եմ:

Բայց Էֆենտին կորովի էր եւ իր ուժին տակ զսպեց զինքը:

- Հանրմս, հանրմս ի՞նչ պիտի ըսեմ,- կ'ըսեր անիկա դողդղալով:

- Խե՛նթ, - պատասխանեց երիտասարդը անոր, - մայրս ինձի ըսավ, որ սենյակդ ես ու եկա քեզ գտա. մորմես բնավ մի՛ վախնար:

Ետ-ետ երթալով կինը պատին կոնքած էր, ալ զինքը գրկող պողպատե բազուկներուն մեջ անարժ մնացած. հոս՝ դիմադրության ուժը կպակսեր. գլուխը պատին դարձուցած ըլլալով, իր պարանոցին վրա կ'զգար համբույրներու կիզումը, ու Տիգրանուհին, անձնատուր ըլլալու մոտ ու անձնատուր ըլլալէ առաջ իր արդարացումը կփնտրեր հիմա, մտածելով, որ ձեռքեն եկածը ըրեր էր ինքզինքը պաշտպանելու համար. ու հանցանքը իրը չէր՝ եթէ չէր հաջողեր: Անձնասպաններ կան, որոնք վերջին պահուն գոչալով հանդերձ, չեն կրնար իրենց որոշումեն ետ կենալ եւ տող մը գիրով իրեց մահը կբացատրեն, կ'արդարացնեն. Տիգրանուհին ըրածն ալ ատ էր:

Դ

Երկու տարի տեւեց այս կյանքը. ուզված աղախինն էր անիկա, որ Էֆենտին տղան Փերա, գեղ տեղվանք երթալէն վազ բերած էր: Սուրբիկ հանրմ հարսի մը պէս հիմա կհագվեցներ զայն, ու եկողին գացողին անոր գովեստը ընելէ չէր դադրեր:

Օրին մեկը, սակայն, Տիգրանուհին հիվանդացավ. գլուխը կդառնար, սիրտը կխառնվեր. այս անհանգստությունը շարունակեց քանի մը օր, բայց սպասուհին վախեն բան մը չըսավ, բերանը չբացավ մեկու մը. քիչ մը ատեն անցավ ու ծոցվորության նշանները երթալով շեշտվեցան: Տիգրանուհին շվարած էր, ինչ ըսելիքը, ինչ ընելիքը չէր գիտեր: Մյուս ծառաները կ'սկսեին քիթներուն տակեն խնդալ, կատակներ ընել, չարչարել զինքը: Այդ միջոցին երիտասարդ Էֆենտին

իր մոտը չէր գար, ու տանը մեջ երեսը չէր նայեր: Հանկարծ օր մըն ալ Սուրբիկ հանըմ գինքը ուշադրությամբ դիտեց, նայվածքով մը, որ կրակե պատմուճանի մը պէս սպասուհիին գլխէն մինչեւ ոտքը շրջապատեց:

- Մո'տ եկու, Տիգրանուհի, - ըսավ անոր բիրտ ձայնով մը: Եվ տեսնելով անոր վարանիւր.

- Սա'նկ, ավելի' մոտ:

Մոտեն' հղութիւնը ակներեւ էր. շատ մը կիներու պէս Տիգրանուհին տգեղցեր էր. երեսին մոտքը թուլցեր, կախվեր էր, փորը անշնորհ կերպով դուրս կցցվեր ու ամեն սիրտը զարնելուն՝ չափազանց մեծցած կուրծքին հարույցքը աչքի կգարներ իսկույն:

Այն ատեն բարկութենէն Սուրբիկ հանըմին խելքը գլխէն գնաց:

- Փոստա'լ, - պոռաց անոր երեսն ի վեր,- փոստա'լ, տունս անպատվեցիր, թե'զ ճեհեննեմ եղի'ր:

Մարիամը վեր վազեց հանըմին ձայնը լսելով:

- Հաճի Տյուրիկ կանչեցեք շուտ, սա շունը առնէ տանի', - կպոռար հանըմը:

Երկու ժամ ետքը թելլալը գտան բերին ու բերանը փրփրելով Սուրբիկ հանըմ իր գայրույթը դուրս թափեց:

Կեղծավորութիւնը անանկ բան մըն է, որ երբեմն ու վերջիվերջո անկեղծության հետ կշփոթվի եւ անկէ չի տարբերիր , ինչպէս որ սուտ խոսողներ կան, որոնք իրենց սուտին կհավտան:

Ասանկ ալ Սուրբիկ հանըմին բարկութիւնը շինծու բան մը չէր, անկեղծ էր. երբեք կարող չէր հիմա մտքէն անցընել, որ իր գիտությամբը, իր կամքովը, իր կարգադրութիւնովը ամեն բան եղած կատարված էր: Իր բերնին մեջ ամեն վայրկյան հեղհեղվող պատիվ, պարկեշտութիւն բառերուն վարժությամբը՝ ցավագարի մը պէս կպոռար, աղախինը, Հաճի Տյուրիկը ու բոլոր աշխարհը

հանցավոր գտնելու կ'ելլեր:

- Հիմա', հիմա', փոստալը թող կորսվի երթա, վայրկյան մը չեմ ուզեր տունիս մեջ:

Այս եղավ իր վերջին խոսքը:

Թելլալը Տիգրանուհիին սենյակը ելավ, մահվան դողերուն մեջ գտավ գայն. սաստիկ ջերմ եկած էր վրան, երեսները կարմրեր էին, մինչդեռ ակռաները իրարու կգարնվեին:

Միջնորդ կինը գթաց անոր. բան մը հարցնելու պետք չուներ. անցած դարձածը գիտեր. միյան հարցում մը .

- Քանի՞ ամսում ես, աղջի':

- Չեմ գիտեր,- մրմնջաց մյուսը:

Վար իջավ հանըմին քով, բայց անիկա նորեն սկսեր էր ձայնը բարձրացնել ու ջանքեր կ'ըներ իր գայրույթը ավելցնելու համար. շարունակ կհիշեր ասանկ աղքատ կին մը իբր սպասուհի իր տունը ընդունելով գործած բարիքը եւ ասոր փոխարեն, գտած ապերախտությունը. սա ազգը ասանկ էր միշտ. աղքատները ասանկ խայտառակ արարածներ էին բոլորն ալ. ու նստած տեղեն փեշը վեր կքաշեր, իբրեւ թե այս տիղմին չքավելու համար: Եվ հանկերգին մը նման միեւնույն նախատական բառը կուգար շուրթերուն վրա, թուքի մը պես.

- Փոստաա՞լը, փոստաա՞լը, ով գիտե ո՞ր ծառաս գլխե հաներ է:

Այն ատեն Հաճին նեղացավ ա՛լ. ձեռքերը մեջքին դրավ ամբարտավան ձեռով մը.

-Ինձի նայե՛, հանըմ, շտտակն ըսե՞մ, անիկա կնիկ ծառա մըն է, դուն քու տղուդ խոսք հասկցնելու էիր. հիմի ալ ելլե՛ր ծառայի հետ տեսնվեր է կ'ըսես. ասիկա մեղք է:

- Ի՞նչ, հիմա ալ տղո՞ւս վրա մութ պիտի քսեք. իմ տղաս ծառայի վրա չի թքներ. բոլոր գեղին աղջիկները, կնիկները իրն են:

- Քու բոլոր գեղիդ մեջ ալ Տիգրանուհիին պես աղվոր մը չկա, հանրմ. դուն եկու՛ր իմ խոսքս մտիկ ըրե, իմ գլխես շատ տաք ու պաղ անցած է. բան մըն է, որ եղեր է. ասիկա առնել անցնելու չէ:

Բայց մյուսը կհամատեր. չէր ընդուներ, որ իր գավակը տեսնված ըլլա Տիգրանուհիին հետ:

Ու վեճը երկարացավ. երկուստեք բիրտ բառերով նախատինքներով լեցված վեճ, որուն մեջ ստորին ու ախտոտ դերը՝ թելլալ կնկանը դերը չէր:

Սուրբիկ հանրմ ուրիշ բանի չէր բաղձար, բայց միայն գայթակղությունը ավելի չտարածված մեյ մը դուրս նետել Տիգրանուհին:

Հաճին խորամանկ էր, զգաց ասիկա եւ ջանաց օգուտ քաղել անկե, սպասուհիին համար քանի մը դուրուշ ձեռք ձգելով:

- Ամեն բան ստակով կ'ըլլա:

-Անոր տալուս Հիվանդանոցին կու տամ,- կ'ըսեր Սուրբիկ հանրմը, կրկնելով այն խոսքը, զոր իրենց պարտքը վճարել չուզողները, հայտնի ավագակ մը չհամարելու համար, սովորաբար կգործածեն մեր մեջ:

Ան ատեն հաճին բերանը բացավ:

- Ինձի նայե, ձեր տղաքներուն էլլենճեին համար տունը աղվոր պեսլեմն ուզողը փարա տալեն քաշվելու չէ, հասկցա՞ր, օղու: Հիվանդանոցիդ ստակ տալուդ, տղուդ ծոցվոր ձգած աղքատ աղջիկն տուր. չունիկ չունետրիկ չեք, փառք աստուծո: Աս աղջիկը տեղ մը չի կրնար աշխատիլ, գավակ պիտի բերե, ապրուստ չունի, գեղը հիվանդ էրկանը դրկելու ստակ չունի:

Սուրբիկ հանրմ պոռաց, հայիոյեց, սակարկեց, եւ վերջիվերջո քսան ոսկի տվավ, բայց այն պայմանով, որ նույն վայրկյանին Հաճին առնե տանի Տիգրանուհին:

Ժամը տասներկուքը անցեր էր: Ղազար Էֆենտին ու տղան տուն դարձեր էին վերջին շոգենավով եւ, դիմացի սենյակը նստած, առուտորի վրա կխոսեին. տղան հոր դեմ բարեւ բռնած էր գրեթե, հնազանդ ու առաքինի գավկի պարկեշտության մեջ:

Այս ժամուն Քատրգյուղեն Պոլիս գալու շոգենավ չկար: Հաճին պարտավորվեցավ, աղջիկը հետը առած, նավակ մը վարձել Ղալաթիա անցնելու համար:

Աշունի իրիկուն մըն էր, ձմեռնամուտի մոտ: Անձրեւ մը կուգար միօրինակ եւ անընդհատ, սեւ քողի մեջ պարփակելով ծովն ու ցամաքը: Նավահանգիստին մեջ շոգենավերը անշարժ հսկաներու պէս կեցեր էին իրենց խաչաձեւ կայմերովը, կարծես թե բարեւ բռնած: Ծովեն՝ Ղալաթիան, ու ավելի բարձր՝ Փերան, իրենց անհամար լույսերը կ'սկսեին մեկիկ մեկիկ վառել:

Ու սմբած՝ այս նավակին մեջ, իր փոքրիկ պողչան թեւին տակ, Տիգրանուհին, կամքն ու գիտակցութենէ գուրկ, ուշադրությամբ մըտիկ կ'ըներ թիւրուն ծովին մեջ մխրճվելու ձայնին, եւ հեռուն մութին մեջ վառվող բիծերը կդիտեր, երբոր առաջին անգամ, իր գավկին խաղալը զգաց որովայնին մեջ:

Գյուղին մեջ Ղազար աղային տանը համար գայթակղություն մը չսեպվեցավ ասիկա. թեւ ճշմարտությունը քիչ շատ իմացվեցավ, բայց ամենքը ըսին, որ Տիգրանուհին ծառաներեն մեկը գլխէ հանելուն համար վռնտված էր: Սուրբիկ հանըմին բարեպաշտությանը վրա այս առթոյժ ավելի շատ խոսվեցավ. անոր տանը բարոյականին համբավը քիչ մըն ալ ավելցավ կարծես: Տղուն աղջիկ տալ ուզող կիները միաբերան գովեցին մայրն ալ, գավակն ալ:

- Փոստալին մեկն էր, - կ'ըսեին սպասուհիին համար, - ասանկ տան մը խըլյները չգիտցավ:

Առուտորի մեջ Ղազար աղային հետ գործ ունեցողներն ալ նույն կարծիքն էին: Ղազար աղան, Սուրբիկ հանըմը կմեղքնային, անոնց ի գործ դրած բարիքին դեմ եղած ապերախտության վրա կգարմանային շարունակ:

- Աշխարհք է սա,- կերկնեին գլուխնին երերցնելով:

Ե

Վրայեն չորս տարի անցեր էր, երբ այս պատմությունը իմացա ես բարեկամի տունի մը մեջ, ուր Տիգրանուհին կ'աշխատեր իբրեւ սպասուհի:

Միշտ աղվորիկ կին մըն էր, թեւ տարիքին հակասող ծանրություն մը կար դնօքին վրա:

Հղության վերջին ամիսները, տղաբեքը Հաճի Տյուրիկին տանը մեջ եղեր անցեր էր, կայտառ, խնդումներես մանչ մը ձգելով իրեն, այն պահուն, ուր անդին գեղին մեջ էրիկը թոքատապէ կմեռներ:

Մեծ ցավ մը չէր գգացեր Տիգրանուհին այս չճանչցած էրկանը մահեն. բայց նորեն թիկունք մը պակսած էր իրմեն այս մահով, որչափ ալ ենթադրական բան մը ըլլար ատիկա: Ու ավելի մեծ սիրով մը փարած էր այս գավկին, որ հայր չունենալուն համար կրկնապէս իրենն էր:

Ինքը աշխատանքի ստիպված ըլլալուն, իր գավակը օտար կնոջ մը հանձնելու հարկադրված էր, եւ օրին մեկը անոր ալ հիվանդանալուն լուրը բերին: Վազեց գնաց, բայց մանկիկին վերջին ժամուն միայն հասավ. բժիշկ, դեղ օգուտ չըրին, ոչ ալ ս. մասունքը գոր Ամենափրկիչէն բերել տվավ. թոշունի մը պէս առանց տրտունջի հոգին ավանդեց անիկա իր գրկին մեջ:

Տիգրանուհին մարդ մարդասանք չուներ. Հաճի Տյուրիկն ալ գեղն էր այդ միջոցին. ինքն իր գլխուն պարտավորվեցավ մեռելաթաղի բոլոր չնչին ու ահավոր պատրաստությունները տեսնել: Ինքը հագվեցուց, սագեց մանկիկը, ինչպէս վերջէն կ'պատներ լալով: Հետո եկեղեցի գնաց փափագ հայտնելով, որ կարելի եղածին չափ շքեղ ըլլա հուղարկավորությունը:

- Մեղք ես, կնի՛կ, ստակ չունիս,- ըսին ժամեն:

Անիկա համառեցավ, ուզածնին վճարեց, շատ մը մոմեր վառել տվավ, պնդեց, որ երկու քահանա գտնվի արարողությանը. մանավանդ չուգեց, որ ճաղի մեջ դնեն

իր գավակը, վախճալով, որ հողին մեջ չմսի անիկա. սնտուկ ապսպրեց, համոզված ըլլալով, որ անոր մեջ պիտի պատսպարվի պգտիկը:

Օր մը շարունակ ասոնցմով զբաղեցավ, ամեն բան իր ձեռքովը կարգի դրավ. ժամին մեջ ինքը մինակ էր եւ մինչեւ գերեզմանատուն, գլուխը բաց, ինքը մինակ հետեւեցավ դագաղին: Հո՛ն, իր աչքին տակ, տեղավորել տվավ գայն հողին մեջ ու ետ դարձավ իր ծառայած տունը, երկու օր բացակա մնալէ ետքը:

Աչքերը ուռած էին լալեն, բայց գանգատի բառ մը չելավ բերնեն. գլուխը կախած, առաջվան պես աշխատանքի տվավ ինքզինքը:

Անկէ վերջ իր բոլոր ստմտութիւնը, իր բոլոր առաջադրութիւնները այս պգտիկ հողակույտին հատկացան: Ամսականէն ժողված առջի ստակովը՝ գերեզմանատան մեջ պգտիկ հող մը գնեց:

- Երկու հոգիանոց հող մը,- ըսավ ցած ձայնով մը թաղականներուն:

Ստակը վճարեց եւ թողքը ձեռքը բռնած իսկույն գերեզմանատուն վազեց, գավկին մարմինը հոն փոխադրել տալու համար: Քիչ ատեն վերջը, պգտիկ պատով մը շրջափակել տվավ այդ պգտիկ հողը. վերջն ալ քար մը դնել տվավ անոր վրա: Բոլոր վաստակածը հող կ'ծախսեր. ամեն ատեն նոր բան մը ուներ շինելիք, ավելցնելիք, գեղեցկացնելիք այդ տեղին մեջ:

Ու մեռելոցին օրերը, քանի հատ որ օր կա տարվոյն մեջ, մեծ ու պգտիկ, ցնծոյթյան օրեր էին իրեն համար: Առտուն կանուխ կ'ելլեր, իր այրի կնոջ արդուզարդը կ'ըներ, լուրջ ու հանդիսավոր արդուզարդ մը, ու ճամփա կ'իյնար դեպի գերեզմանատունը. պգտիկ տապանին քով չոքած՝ երկար բարակ ու ցած ձայնով կ'խոսեր իր գավկին հետ, անոր մանուկի բարբառովը: Ամեն հեղուն տերտերին օրհնել կու տար գերեզմանը, հարուստն մը ավելի առատաձեռնութեամբ տալով օրհնողչերը:

Դարձին՝ երանութիւն մը կար անոր դէմքին վրա:

- Ո՞ր գացեր էիր, Տիգրանուհի՛, - կհարցնեին տնեցիները, իբրեւ թե չգիտնային անոր ո՞ր երթալը:

- Հանը՛մ, գավկիս գացի, - կպատասխաներ ուրախությամբ:

1901